



# Ազդարարութեան

## Trumpet's Sound Փող

50-րդ ՏԱՐԻ, ԱԽՏՐԱՎԵԼՈՒ  
ՅՈՒՆԻՍ - ՕԳՈՆՍՏՈՒ 2019



«ԱԶԳԱՐԱՐՈՒԹԵԱՄ ՓՈԴ»  
երկանոյա հոգեւոր քերթ

Պատասխանատու խմբագիր՝  
հովի Հրաշ Գույուճեան

ACM AUSTRALIA  
PO BOX 1593,  
CHATSWOOD NSW 2057  
EMAIL: hkiujian@acmaust.org  
URL: www.acmaust.org



## Բովանդակութիւն

Ո՞վ է Աստուած . . . . .	<b>3</b>
<i>Հովի Հրաշ Գույուճեան</i>	
Հիւրընկայել երևանյան այցելուներուն . . . . .	<b>5</b>
<i>Տռն Սրորմբը</i>	
Մահեն վերջ . . . . .	<b>8</b>
<i>Քաղուած</i>	
Մովսես (1) . . . . .	<b>10</b>
<i>Փող Ռապրիմն</i>	
Փսոռոցքը ու պիտի գտնելք . . . . .	<b>13</b>
<i>Աերս Տիրապ</i>	
Այցելէք բազմաթիւ լաւ գրքեր . . . . .	<b>15</b>
<i>Վարդան Սարգսիսեան</i>	

Կազմի նկարը՝ հայկական խաչարար,  
ACM 2018թ.

## ԱՍՍ-ի աղօթքի նիւթեր

- Ծնորհակալութիւն յայտնեք Քօրը ամեն բանի համար, քանի որ Ան գիտ մեր բոլոր կարիքները:
- Կը խնդրենք աղօթել, մինչ Երեւանի մէջ նոր գրասենեակ կը փնտռենք:
- Ծնորհակալութիւն յայտնեք անոնց համար, ովքեր միացան Քայաստան մէկնած միսիոնարական խումբին Յունիս ամսին:
- Աղօթք Կիւմրիի ծառայութեան համար անհրաժեշտ ութ նստատեղով մեթենայի համար:
- Աղօթք Կիւմրիի «Ծնորհք» եւ «Ամկիւնաքար» կեղրոններու վերանորոգման անհրաժեշտ միջոցներու համար:
- Աղօթք Տիրոջը մեր խնամակալութեան տակ գտնուող կարիքաւորներու եւ հիւանդներու պէտքերը հոգալու միջոցներու համար:
- Աղօթք մեր ծառայակիցներու իմաստութեան եւ անվտանգութեան համար:

## Ո՞Վ Է Աստուած

**Ա**շխարհը մեծ ջանքեր կը գործադրէ մերժելու Աստուածոյ եւ Իր գոյութիւնը: Կառավարութիւններ, կազմակերպութիւններ եւ զանգուածային լրատուամիջոցներ ջանք չեն խնայէր «Աստուած» բառը մեր բառապաշարէն դուրս հանելու եւ հանրային դպրոցներէն ներս Աստուածոյ մասին ուսուցումը դադրեցնելու: Որոշ աստուածներ մարդու ձեռքով պատրաստուած կուռքեր կամ արձաններ են, բայց ես կը խօսիմ Աստուածաշունչի Արարիչ Աստուածոյ մասին, Ով՝ եր, եւ է, եւ պիտի գայ, այն Աստուածը, ով Ալֆան ու Օմելան է:

Աստուած մարդուն Իր պատկերով ստեղծեց, եւ կը հաւատամ, որ այս երկրի վրայ իրաքանչիւր մարդ՝ ըլլայ քաղաքի մէջ քնակող, թէ՝ հեռաւուր գիտի մէջ, Աստուած գտնելու եւ զինք երկրպագելու խորունկ փափաք ու սով ունի իր մէջ: Արարիչը մարդկային սրտին մէջ զինք փընտելու ու գտնելու փափաք դրած է:

**Աստուած ի՞նչ կ'ըսէ Իր մասին.** «Ես եմ առաջինը ու Ես եմ վերջինը, Ինձմէ զատ Աստուած չկայ» (Եսայ. 44:6):

**Աստուածաշունչը ի՞նչ կ'ըսէ Աստուածոյ մասին.** «Աստուած Հոգի է եւ Իրեն երկրպագողներն ալ պէտք է որ հոգիով ու ճշմարտութիւնով երկրպագութիւն ընեն» (Յովհ. 4:24):

**Յիսուսը ի՞նչ կ'ըսէ.** «Ես եմ ճամբան ու ճշմարտութիւնը եւ կեանքը. մեկը Հօրը քով չի գար՝ եթէ ոչ Ինձմով» (Յովհ. 14:6):

Աստուած Իր անձը յայտնեց Իր Որդու՝ Տէր Յիսուս Քրիստոսի միջոցով:

**Աստուածաշունչը Երբորդութեան մասին կը սորվեցնէ մեզ.** «Ուրեմն գացէք բոլոր ազգերը աշակերտեցէք, մկրտեցէք զանոնք յանուն Հօր եւ Որդույ եւ Հոգույն Սրբոյ» (Մատթ. 28:19):

### Յանուն Հօր եւ Որդույ եւ Հոգույն Սրբոյ

Աստուած, որուն կ'երկրպագենք Եռամէկ Աստուած է: Հետեւեալ ձեւով կրնամ նկարագրել այն. որպէս մարդ մենք ունինք հոգի, մարմին եւ շունչ: Մեր արարիչ Աստուածը՝ Հայր Աստուածը, Որդի Աստուածը եւ Սուրբ Հոգի Աստուածն է:

Յիսուս Քրիստոսը եկաւ մարդկութեան փրկութեան համար: Մեր փրկութիւնը մեղքէն փրկուիլն է: Մեր բոլոր մեղքերը Աստուծոյ դէմ են եւ ոչ թէ՝ իրարու: Ամբարիշտը՝ փորձելով ազատիլ յանցաւորութեան զգացումէն կը մերժէ Աստուծոյ գոյութիւնը:

Խե՞ղճ հոգի, Աստուծոյ դատաստանէն ո՞ւր պիտի փախչիս: Մենք բոլորս մեղանչեցինք եւ Աստուծոյ փառքէն պակսեցանք: Աստուծաշունչը կը խօսի դատաստանի օրուայ մասին, երբ բոլոր ծունկերը պիտի խոնարիին, եւ տղամարդիկ ու կանայք պիտի դատուին իրենց գործերուն համեմատ, թէ՝ լաւ եւ թէ՝ չար:

«Վասն զի շնորհքով փրկուած էք դուք հաւատքի միջոցով եւ այս՝ ո՞չ թէ ձեզմէ է, հասաւ Աստուծոյ պարգևն է. ո՞չ թէ գործերէն, որ մէկը չպարծենայ» (Եփես. 2:8-9):

Ապաշխարեցէք եւ Յիսուսին եկէք: Փրկութեան դուռը լայն բացուած է: Տէր Յիսուսն Իր կեանքը զոհեց խաչին վրայ, որպէսզի դուն կարողանաս ապրիլ: «Վասն զի Աստուծած այնպէս սիրեց աշխարհը, մինչեւ իր միածին Որդիին տուաւ, որպէս զի ամէն ո՞վ որ Անոր հաւատայ՝ չկորսուի, հապա յափուենական կեանք ունենայ» (Յովե. 3:16):

Սա Աստուծոյ շնորհքն է ողջ մարդկութեան համար: Այն երբեք գործերով կամ գումարով չենք կրնար ունենալ. այն ձրիապէս հասանելի է, երբ մեր մեղքերու թողութեան համար Յիսուսին կը մօտենանք:

Թերեւս հարցմէք, թէ ինչպէ՞ս կրնաք փրկուիլ: Պատասխանը սա է. «Հաւատա՛ Տէր Յիսուս Քրիստոսին ու պիտի փրկուիք դուն եւ քու տունդ» (Գործք 16:31):

Հ. Գ.

«Թերեւս մտածէք, թէ ամնշան եք Աստուծոյ մեծ ծրագրին մէջ, բայց այդպէս չէ: Դուք չափազանց կարեւոր էք Աստուծոյ համար, այնքան կարեւոր, որ Յիսուսը մահացաւ ձեզ համար եւ Սուրբ Հոգին այժմ կ'ապրի ձեր մէջ: Դուք ձեր աչքի դիմաց թերեւս շատ փոքր թուաք, եւ սա լաւ է, քանի որ Աստուծած հըպարտներուն հակառակ կը կենայ, բայց խոնարիներուն շնորհք կուտայ: Այնուամենայնիւ, թոյլ մի՛ տուէք, որ ձեր խոնարիութիւնը մեղք դաշնայ՝ համոզելով ձեզ, որ Աստուծոյ համար ոչինչ չէք կրնար ընել: Աստուծած կրնայ օգտագործել ձեզ՝ կատարելու իր կամքը երկրի վրայ»:

Ուորէն Ուիրզպի

# Հիւրընկալել երկնային այցելուներուն

**Կարդացէ՛ք Ծննդոց 18:1-15-ը**

**Լ**այ է այս գլուխսն ամբողջութեամք կարդալ ու ծածօթանալ անոր մէջ ծաւալուած իրադարձութիւններուն: Աքրահամք հիւրընկալեց երկնային այցելուներուն՝ առանց նախապէս զիտակցելու, թէ ովքեր են անոնք: Մենք կը դիտարկենք, թէ Աստուած ինչպէ՞ս յայտնուեցաւ տարբեր մարդկանց՝ Հին Կտակարանի ժամանակներուն մէջ, այնուհետեւ՝ Սառայի հաւատքը: Եթի կարծես բոլոր յոյսերը մարած կ'ըլլան, հնարան՝ ի արդեօք մտածենք, թէ կան որոշ բաներ, որոնք Աստուածոյ համար շատ դժուար են: Վերջապէս, կը տեսնենք, որ Աքրահամք Աստուածոյ կ'աղաք: Սողոմի մէջ հնարաւոր արդար մարդկանց կեանքի փրկութեան համար:

Եթի Երրայեցիններուն ուղղուած նամակի գրողն իր ընթերցողններուն քաջալերեց հիւրասիրութիւն ցուցաբերել, ան յիշեցուց անոնց, որ ունանք անտեղեակ ըլլալով իրեշտակներու հիւրասիրութիւն ըլլին: Ոչ ոք չի կրնար կանխատեսել, թէ ինչ օրինութիւն կրնայ բերել անակնկալ բարութիւն ցուցաբերելլ: Անսպասելիօրէն երեք մարդիկ կանգնեցին Աքրահամի առջեւ՝ իր վրանի դրուին մօտ, եթի ան օրուան տաք տանը նստած կը հանգստանար: Կարելի է պատկերացնել, թէ Աքրահամի սիրտը ինչպիսի մեծ գոհունակութեամք կը լեցուէր, եթի տարիներ անց կը մտածէր այդ օրուայ մասին:

Աքրահամք ցոյց տուաւ իր հիւրասէր ըլլալը առաջարկելով ջուր բերել, որպէսզի այցելուները լուանան իրենց ուորերը: Ան նաեւ առաջարկեց պատառ մը հաց ուտել: Անոնք համաձայնեցան: Այնուամենայնի, ճաշը պատառ մը հացէն շատ աւելի էր: Աքրահամի առաջարկը գուցէ արտացոլէր այդ ժամանակներու ստվորոյթը, որ տանտէրը չափազանց շատ կերակուր չէր առաջարկէր, քանի որ գուցէ այցելուն մերժէր այն: Այնուամենայնի, Աքրահամի ճոխ առատաձեռնորիթիւնն ակընյայտ էր: Եթի գառնուկ մը կամ ովկիկ մը մատուցելը բաւարար կը սեպուէր, ան հորք մորթել տուաւ: Աքրահամի պատրաստած սեղանը անկասկած «պատառ մը հաց»-էն շատ աւելի ճոխ էր:

Պատմութիւնը կարդալով շուտով կը հասկնանք, որ անոնք սովորական մարդիկ չեն: Երկուքը հրեշտակներ էին, որոնք Աքրահամի հիւրընկալութիւնը վայելելէ ետք Սողոմ պէտք է երթային: Սակայն երրորդ անձը Տէրն էր: Մենք գիտենք, որ Տէր Յիսուսը Աքրահամի մասին ըստ էր, որ ան ցանկացաւ Իր օրը տեսնել, եւ տեսաւ ու ուրախացաւ: Մենք վստահ չենք գիտեր, թէ Տէրը ո՞ր դրուագը նկատի ուներ. եթէ Ան նկատի չուներ Աքրահամի՝ իր որդի Խսահակին զոհ մատուցելը, ապա Ան գուցէ այս դրուագը նկատի ունենար:

Սա միգուցէ Թէռֆանիայի (Աստուածայայտնութեան) մեր առաջին յստակ տեղեկութիւնն է: Թէռֆանիան Տէր Յիսուսի՝ Հին Կտակարանի սուրբերուն յայտնութիւնն է: Ասիկա առաջին դէպքն է, եթր վստահ կըրնանք ըսել, թէ Տէրը յայտնապէս տեսնուեցաւ: Աստուած Ադամին ու Եւային հետ խօսեցաւ օրուայ զով ատենք, բայց մեզի չ'ըսուիր, թէ ինչ ձեւով յայտնուեցաւ: Ենովը Աստուծոյ հետ քալեց, բայց դարձեալ մանրամասնութիւններ չեն տրուած, ոչ ալ գիտենք, թէ Աստուած ինչպէս Նոյին փոխանցեց Իր պատգամը, կամ Աքրահամին՝ վաղ շրջանին: Աստուած խօսեցաւ Աքրահամի հետ, եթր Ղովտը հեռացաւ իրմէ: Ան նաեւ տեսիլքով խօսեցաւ, եթր իր հետ ուխտով խոստացաւ իրեն տալ այն երկիրը, որտեղ կը բնակէր (Ծննդ. 15): Նաեւ կը կարդանք, որ Աստուած Աքրահամին յայտնուեցաւ, եթր թլփատութեան նշանը տուաւ (Ծննդ. 17), սակայն դարձեալ մանրամասնութիւններ տրուած չեն: Խսկ այստեղ, նախ կը կարդանք, որ Աքրահամն իր աշքերը վերցուց ու նայեցաւ, եւ ահա երեք մարդիկ կայներ էին իր մօտ:

Մենք կընանք զարմանալ ու հարց տալ, թէ Աքրահամն ինչպէ՞ս ճանչցաւ իր Այցելուին, եւ ե՞րբ ճանչցաւ: Ասդու մասին յուշում մը կայ 3-րդ համարին մէջ, ուր Աքրահամը եզակի թիւ կ'օգտագործէ, խսկ յետոյ՝ 4-րդ եւ 5-րդ համարներուն մէջ՝ յոգնակի թիւր: Անկասկած, երկու հրեշտակներու Սողոմ երթալէն ետք, Աքրահամը գիտակցեց, որ Տիրոջը հետ կը խօսի:

Աքրահամին այցելելու երկու պատճառ կար: Առաջինը՝ որ Սառան վստահ իմանար, թէ ինքը Աքրահամին որդի պիտի ծնաներ, խսկ երկրորդը՝ Աքրահամին տեղեկացնելու Սողոմի եւ Գոմորի դատավճոի մասին:

Այցելուները նախ հարցուցին, թէ որտեղ էր Սառան: Այս հարցը նըման է Ծննդ. 3:9-ի եւ Ծննդ. 4:9-ի հարցերուն: Աստուած գիտէր, թէ որտեղ էր Աղամը, եւ Ան գիտէր, թէ որտեղ էր Հարէլը, բայց Ան կ'ուզէր անոնց արձագանքը տեսներ: Կը պատահին ժամանակներ, երբ Աստուած ինչ որ մէկուն կ'օգտագործէ մեզ հարց մը ուղեկու, որը մեզ համար սովորական է, բայց Ան կ'ուզէ, որ մենք դադար առնենք եւ զգուշութեամբ մտածենք, թէ ինչ ըրինք կամ ինչ կ'ընենք:

Տէրը գիտէր, թէ որտեղ էր Սառան, բայց Իր տուած հարցը գրաւեց Սառայի ուշադրութիւնը: Եթէ այցելուները գիտէին Սառայի անունը, ապա վստահարար գիտէին նաև անոր ուր ըլլալը: Թէեւ Տէրը Արքահամին հետ խոսեցաւ, սակայն այդ ուղերձը յատուկ Սառայի օգուտի համար էր: Եւ ան հաստատ կը լսէր այդ ուղերձը:

Հետաքրքրական է, թէ ինչո՞ւ Տէրը Անձամք եկաւ Սառային՝ որդի ունենալու պատգամը փոխանցելու համար: Մեկնարան մը կ'ըսէ, թէ միգուցէ Արքահամը Սառային չէր տեղեկացուցած Տիրոջ կողմէն իրեն տրուած լուրը: Սա այդքան ալ հաւանական չէ, քանի որ Սառան զարմանք չյայտնեց, երբ Տէրը իր մասին խոսելու ատեն Սառա անունը գործածեց, եւ ոչ թէ իր հին անուն՝ Սարան: Արդեօք ան չէ՞ր հաւատցած Արքահամին, որ այդ պատգամը պէտք եղաւ յատուկ կերպով իրեն ըսուիլ:

Բայց դարձեալ, մեզի համար դաս մը կայ: Արդեօք իսկապէս կը հաւատա՞նք, որ Աստուած անհնարինը կրնայ ընել: Արդեօք կը վստահի՞նք, որ Ան օրէօր կը խնամէ մեզ: Մեր ճամփաները ամէն օր կատարեալ վստահութեամբ կը յանձնե՞նք Իրեն, գիտակցելով որ Ան կրնայ առաջնորդել ու պահպանել մեզ օրուայ ընթացքին: Կը հաւատա՞նք, որ Ան կրնայ օրացնել մեզ, որպէսզի կարողանանք հաւատարմօրէն Իրեն ծառայել:

Այս պատմութեան մէջ մէկ այլ նրբութիւն մը կայ, որը կը շփոթեցնէ մեզ: 17-րդ գլխուն մէջ Արքահամի երեսի վրայ իյնալու ու խնդալու մասին որեւէ մեկնութիւն չէ ըսուած, երբ իրեն ըսուեցաւ թէ Սառան որդի պիտի ունենայ: Անոր ծիծաղը անհաւատութեա՞ն նշան էր: Չենք գիտէր: Ինչո՞ւ անոր ծիծաղը չյանդիմանուեցաւ, իսկ Սառայինը՝ յանդիմանուեցաւ:

Սառան կարծես թէ կասկածի տակ առաւ Ամենակարողի զօրութիւնը: Արքահամը հաւանաբար մտածեց, թէ իր տարիքի մարդիկ ինչպէ՞ս ծնողը կրնան դառնալ, բայց Սառայի հարցին մէջ Աստուծոյ՝ Իր տրուած խոստումը կատարելու կարողութեանը կասկած կար:

Այնուիետեև Սառան կրկնապատկեց իր մեղքը: Անհաւատութեան մեղքին վրայ սուտը աելցուց: Երբեմն մեր սխալները ծածկելու մեր շանքերը աւելի կը շատցնեն մեր մեղքերը: Շատ աւելի լաւ է խոստովանել մեղքը, քան այն ուրանալը: Ի վերջոյ, եթէ նոյնիսկ քաքցնենք այն մեր ընկերներէն Ամենակարողէն ոչինչ չենք կրնար քաքցնել: Ամէն քան բաց է Իր աշքերուն առջեւ:

Ի՞նչ կը սորվինք: Աստուած ամենազօր է եւ հաւատարիմ Իր Խօսքին: Ան կը կատարէ Իր խոստացածը: Մեր բաժինը այն է, որ ամբողջութեամբ վստահինք Իրեն: Արդեօք այդպէս կը վստահի՞նք:

Տնն Սրորմը

## **Մահէն վերջ**

**Ա**նգամ մը պատերազմի ատեն երիտասարդ մը զինուորագրուեցաւ եւ պատերազմի պիտի երթար: Անիկա իր վերջին հրաժեշտը տալվ տունէն հեռանալու ատեն մայրը Նոր Կտակարան մը դրաւ անոր ձեռքին մէջ եւ արցունքներն ու աղօքքները իրարու խառնուած անոր ըսաւ. «Երթաս բարի»: Վշտահար մայրը կրկին պատուիրեց ու նաեւ խնդրեց որ այդ փոքր գիրքը ամէն օր կարդայ եւ անոր պատուէրներուն հնազանդի: Աւելցուց սա խօսքն ալ, թէ՝ եթէ իր տունը վերադառնայ եւ կամ պատերազմի դաշտին վրայ մեռնի ալ, ամէն քան անշուշտ լաւ պիտի ըլլայ. եթէ այդ փոքր գիրքին լոյսին հետեւի եւ պատուէրներուն հնազանդի:

Երիտասարդը տունէն հեռանալէ յետոյ շատ մը պատերազմներու մէջ մտաւ, իրարու ետեւէ, առանց օր մը իսկ կարդալու իր Նոր Կտակարանը: Օր մը բոլոր բանակը ամենէն սոսկալի յարձակման մը հա-

մար կը պատրաստուիր եւ հրամանատարը հրահանգներ տուաւ զին-ուորներուն ըսելով. «Հիմա զօրացէք եւ քաջասի՞րտ եղէք: Զեզմէ շա-տերը պիտի չվերադառնան: Սակայն մինչեւ վերջը հաւատարի՞ն եղէք ձեր պարտականութեանը»: Այս երիտասարդին դէմքը մեռելի պէս դեղնած էր եւ անոր ընկերները կը ծաղրէին զայն վախցած երեւնա-լուն համար: Անոնք այսպէս կ'ըսէին իրեն. «Այս անգամ քեզ պիտի բռնեն, ով տղայ, եւ դուն մահէն կը վախնաս, այդպէս չէ՞»: Ասոր վրայ անիկա իր Նոր Կտակարանը դուրս հանելով ըսաւ. «Երբ տունես կ'ել-լիի, մայրս պատուիրեց որ ասիկա կարդամ ամէն օր, ես ալ այդպէս ընել որոշեցի եւ այդպէս ընել խոստացայ: Սակայն դեռ բնաւ բացած չեմ զայն: Ան ըսաւ ինձի թէ, եթէ անոր լոյսին եւ պատուիրներուն հե-տեւիմ ամէն բան լաւ պիտի ըլլայ: Սակայն անոր լոյսին եւ պատուիր-ներուն ինչ ըլլալը չեմ զիտեր, վասն զի դեռ կարդացած չեմ զայն: Հի-նա այս պատերազմին կը մտնեմ, սա սուկայի մտածմունքով թէ կարե-լի է ողջ պիտի չվերադառնամ: Ո՛չ, բարեկամներ, մահէն չէ որ կը վախ-նամ»: Քիչ մը կեցաւ եւ խորապէս յուզուած սրտով բացագանչեց. «Ո՛վ իմ Աստուածս, մահէն վերջը ինչ պիտի ըլլամ, ես անկէ կը վախնամ. բանի որ անոր համար որեւէ պատրաստութիւն մը չունիմ»:

Ասիկա շիտակ չէ՞: Ամէն մարդ զիտէ թէ մահէն վերջը կեանք մը կայ, որ անվախճան եւ յախտենական է: Գերեզմանը մեր գոյութեան վախ-ճանը չէ, հապա դուռ մըն է միայն որ մեզ անվերջ կեանքի կ'առաջ-նորդէ: Մահը զարհութելի է թէեւ, սակայն ոչինչ է բաղդատմամբ անոր հետ որ կ'անուանուի երկրորդ մահ:

Ընթերցո՞ղ, դուն պատրաստութիւն ունի՞ս այդ կեանքին համար: Միայն Յիսուս է դուռը, որ քեզ մահէն անդին եղած յախտենական ուրախութեան կը տանի: Դուն գտա՞ծ ես զԱյն: Անիկա քեզ կը կանչէ եւ քեզի կը սպասէ: Դուն բնաւ ապահով չես, ոչ ալ կրնաս ապահով ըլլալ, եթէ անմիջապէս այսօր չապաշխարես:

Քաղուած՝ «Ընտիր ժողովածու հոգեւոր պատմութիւններու» գրքէն



## Մովսէս (1)

### Կարդացէ՛ք Ելից Յ-րդ գլուխը

**Մ**ովսէսը մեծ անձնաւորութիւն էր: Իր մանկութեան եւ երիտասարդութեան շրջանին՝ մօտ 30 տարի, ան Եգիպտոսի իշխան էր, արտօնեալ ու կարեւոր անձ մը: Անկէ առաջ զինք սնուցած ու դաստիարակած էր իր սեփական իրեայ մայրը, ով իրեն սորվեցուցած էր իր սեփական ժողովուրդի աւանդութիւնները: Ան երբեք չմոռցաւ, որ իրեայ ըլլալ կը նշանակէ Աստուծոյ ժողովուրդի մի մասը կազմել: Մովսէսը ամբողջ կեանքին մէջ հաւատարիմ մնաց իր արմատներուն:

Եկաւ այն օրը, երբ Մովսէսը Եգիպտացիներու փոխարէն գիտակցաբար նախընտրեց իր արհինակից ժողովուրդին (Եբր. 11:24), քայլ այդ տակաւին Աստուծոյ սահմանած ժամանակը չէր, երբ Մովսէսը պէտք է դառնար Խրայէլ ժողովուրդի առաջնորդը:

Մովսէս ատոր փոխարէն դարձաւ վտարանդի եւ փախստական: Ան ապրեց օտարքներու հետ, օտար հողի մէջ՝ ոչխարներու հովուութիւն ընելով: Եգիպտացիներու համար սա ամենայ ստորացուցիչ, «սեւ» աշխատանքն էր, իսկ Մովսէսը կատարեց այդ աշխատանքը 40 տարի:

«Ելից» գրքի Յ-րդ գլուխը կը սկսի, երբ Մովսէսը 80 տարեկան է: Բոլոր 40 տարիներու ընթացքին ան ունէր այն ամենը ինչ կեանքը կը ընար առաջարկել իրեն, եւ այնուամենայնիւ, յաջորդ 40 տարիներու ընթացքին ան ապրեցաւ որպէս հովի, դուրսը տառապեց տաք ու ցուրտ եղանակը, միայնակ՝ սարերուն ու դաշտերուն մէջ: Ի՞նչ կ'ընէր Աստուծած անոր կեանքին հետ. եթէ Աստուծած ծրագիր ունէր անոր կեանքին համար, ո՞րն էր այդ ամենի իմաստը:

Մովսէսը սորվեցաւ ուժեղ ըլլալ եւ ստիպուած սորվեցաւ խոնարի ըլլալ: Ան նաեւ սորվեցաւ դիմանալ դժուարութիւնները, առաջնորդելը, եւ հիմա եւս մէկ դաս ունէր սորվելու: Ան պէտք է ճանչնար Տիրոջը, ով իր կեանքը կ'առաջնորդէր՝ առանց վերջինիս գիտակցելուն:

#### **Աստուծմէ կանչուած եւ առաջնորդուած**

Մովսէսը հասաւ «Աստուծոյ լեռ» կոչուած վայրը ուր անձնապէս Աստուծոյ հանդիպեցաւ: Այնտեղ ան ապշահար եղաւ՝ տեսնելով քու-

փը, որը կայրուէր, բայց չէր սպառուէր: Ան զմայլած էր, բայց պատկերացում անգամ չունէր, թէ ինչ պիտի յաջորդէր այս ամենուն՝ ինչպէս եւ մենք, երբ Աստուած կուգայ մեր կեանքին մէջ: Մեր Աստուածը նպատակներու Աստուած է: Տէրը պարզորոշ կը յայտնի Աստուածաշունչն մէջ, որ նպատակ ունի այս աշխարհի համար: Ան նաև նպատակ ունի մեր կեանքներուն համար այս աշխարհին մէջ, եւ երկու ծրագիրներն ալ յաջողութեամբ կ'իրականացնէ: Մեզ համար անհրաժեշտ է միշտ «քալել» Աստուծոյ կողքին:

Այրուող թուփի մէջէն Աստուած խօսեցաւ Մովսէսի հետ: Մովսէսը պատասխանեց, միզուցէ հետաքրքրութիւնն դրդուած, բայց Աստուած խօսեցաւ անոր հետ: Կը խորիմ, թէ Մովսէսը 80 տարի կը հաւատար Աստուծոյ, բայց երբեք Աստուած իր հետ չէր խօսած: Աստուած խօսեցաւ, որպէսզի սորվեցնէ իրեն Իր ով եւ ինչպիսին ըլլալը:

Ի՞նչ գիտեր Մովսէսը Աստուծոյ մասին մենք չենք գիտեր: Անոր մայրը ի՞նչ սորվեցուցած էր զինք, չենք գիտեր, բայց նոյնիսկ գիտնալով Տիրոց մասին՝ Մովսէսը զինք չէր ճանչնար: Շատ մեծ տարբերութիւն կայ: Աստուծոյ մասին գիտնալը կեանքդ չի փոխէր, իսկ զինք ճանչնալը՝ կը փոխէ:

## **Աստուած Մովսէսին կը յայտնի Իր բնութիւնը**

### **1. Աստուած սուրբ է**

Առաջին հրահանգը, որ Աստուած Մովսէսին տուաւ, այն էր որ վերինս չէր կրնար իր ուզած ձեւով Աստուծոյ մօտենալ: Տէրը պատուիրեց իրեն հանել կօշիկները: Գործողութիւնը խորհրդանշական էր, քանի որ ակնյայտորեն կօշիկները Մովսէսի ամենակեղսոս մասերն էին այդ պահին: Աստուած նախ սուրբ է, շատ տարբեր է մեզմէ եւ ամբողջութեամբ գերծ է որեւէ տեսակի անմաքրութիւննէ: Մենք այդպէս չենք: Մենք անմաքոր ենք ֆիզիկապէս, զգացումով, մտքով եւ հոգեւորապէս: Արդեօք այս ամենը նշանակութիւն ունի՞ն մեզ համար. ի հարկէ:

Աստուած այսօր նոյնն է, ինչ այն ժամանակ: Ան միակն է ով երբեք չի փոխուիր: Երբ կուգանք Տիրոց առջեւ, Մովսէսի պէս պէտք է գիտակցինք, որ արժանի չենք Իրեն: Ասոր համար է, որ կը խոստովանինք մեր մեղքերը, երբ կուգանք Տիրոց առջեւ աղօթելու կամ Անոր սուրբ Խօսքը լսելու:

Ի տարբերութիւն ճշմարիտ Աստուծոյ՝ ազգերու «աստուածները» բոլորովին սուրբ չեն, կարեւորութիւն չունին, անմաքուր են: Ամէն քանի Արարիշը յախտենական եւ մշտնջենական է: Մենք պէտք է մօտենանք Իրեն մեծագոյն յարգանքով եւ երկիւղածութեամբ: Ասիկա հնացած աշխարհայեացը չէ, սա այն է ինչ Երրայեցիներու քուրի հեղինակը կը պատուիրէ մեզ. մենք պէտք է մօտենանք Անոր ակնածանքով եւ աստուածային երկիւղածութեամբ, քանի որ «մեր Աստուածը մաշող կրակ է» (Երր. 12:28-29):

## 2. Աստուած ողորմած է

Այնուհետեւ Աստուած յայտնեց Ինքն Իրեն, որպէս ողորմած Աստուած: Ան մեզմէ հեռու չէ, Ան անտարբեր չէ մեր դժուարութիւններու նըլկատմամբ: Աստուած ըսաւ. «Եզիպտոսի մէջ եղող ժողովուրդիս չարչարանքը արդարեւ տեսայ, եւ գործավարներուն պատճառաւ անոնց վերցուցած աղաղակը լսեցի, վասն զի անոնց նեղութիւնները գիտեմ» (Ելից 3:7):

400 տարուայ լնիթացքին Աստուծոյ ժողովուրդը ապրեցաւ, որպէս օտարական՝ օտարի հողին մէջ: Անոնք չնայած որ քազմապատկուեցան, սակայն չժառանգեցին խոստացուած երկիրը եւ ի հարկէ օրինութիւն չեղան ամբողջ աշխարհի ազգերուն համար:

Աստուծոյ ծրագիրները յախտենական են եւ նախատեսուած չեն միայն երկրային կեանքի համար: Մեր կեանքի ժամանակահատուածը աչք թարթելու չափ կարծ է Աստուծոյ մեծ յախտենականութեան համեմատ, նոյնիսկ եթէ այն մեզ երկար կը քուայ: Աստուծոյ փրկութեան ծրագիրը իրականութիւն կը դառնայ, որովհետեւ Ան խոստացաւ, քայց ամէն քան կը կատարուի Իր նախատեսած ժամանակին: Սակայն Աստուծոյ ծրագրին մէջ մեր ներկայ կեանքի պահերը նոյնպէս ընդգրկուած են: Եւ այստեղ մենք կը տեսնենք, որ Աստուծոյ ծրագրի յաջորդ աստիճանը Անոր վերադարձն է, քանի որ Իր ժողովուրդը կը տառապի եւ Ան կը հոգայ անոնց համար: Այսպիսով Աստուած կը կրկնէ Իր խոստումը. «Այն երկրէն աղէկ ու լայնարձակ երկիր մը, կաք ու մեղր բխող երկիր մը... հանելու իջայ» (Ելից 3:8): Ի՞նչ ալ որ մտածս, Աստուած անտարբեր չէ: Ան Հոգատար է:

Փոլ Ուայրինկ  
(Չարունակելի)

## Փնտռեցէ՛ք ու պիտի գտնէք

### Մատրէոս 7:7

**Ս**տուած կը պահէ Իր խոստումները: Երբեմն կը լսենք ինչ որ մե-  
կը կը կը հարցնէ. «Իսկ ի՞նչ պիտի ըլլայ այն մարդկանց վիճակը,  
ովքեր Քրիստոսի մասին երբեք չեն լսած: Անոնք Երկինք պիտի եր-  
թա՞ն, թէ՞ դժոխք պիտի երթան, առանց առիթ ունենալու»: Քրիստոսն  
Անձամբ կը պատասխանէ ըստելով. «Փնտռեցէ՛ք ու պիտի գտնէք»  
(Մատք. 7:7): Ասիկա անպայմանական խոստում է, որը կը վերաբերի  
նոյնիսկ այն մարդկանց, ովքեր կ'ապրին այնպիսի վայրերու մէջ, որ-  
տեղ Աւետարանը լսելու հնարաւորութիւն չեն ունեցած: Աստուած կ'ը-  
սէ, եթէ անոնք փնտռեն, ապա կը գտնէն: Կապ չունի Չինաստանի կեղ-  
րոնին մէջ կ'ապրին, թէ հեռաւոր ու խուլ կղզիի մը մէջ:

Սի քանի տարի առաջ, խումբ մը քրիստոնեաներու հետ Նոր Զե-  
լանտայի փոքրիկ քաղաքի մը բնակիչներուն տուները դրնէ դուռ այ-  
ցելեցինք: Բացատրեցինք, որ քրիստոնեաներ ենք և եկած ենք մարդ-  
կանց Յշտու Քրիստոսի մասին պատմելու համար: Տիկին մը մեզ իր  
տունը հրաւիրելով ըստի. «Երեի Աստուած ձեզ ուղարկեց ինձի օգնե-  
լու»: Սա անսովոր արձագանք էր մեզի համար: Մենք ներս մտանք եւ  
տիկինը պատմեց իր պատմութիւնը: Ան հետաքրքիր, լիարժեք եւ յա-  
ջողակ կեանք մը ապրած էր, եւ Աստուծոյ կարիքը երբեք չէր ունեցած:  
Իրականութեան մէջ ան արեխստ էր: Սակայն օր մը իր 7-ամեայ որդին  
իր աչքերու առջեւ ճանապարհի պատահարով մը մահացաւ: Յաջորդ  
ամիսներու ընթացքին իր վշտէն մեծապէս տառապելով օր մը խոհա-  
նոցին մէջ յուսահատութեամբ աղաղակեց ըստելով. «Ո՛վ Աստուած, ես  
երբեք Քեզ չեմ հաւատացած, որ գոյութիւն ունիս, բայց եթէ կաս, Չու  
Անձդ ինձի ցոյց տուր»: Ընդամենը մի քանի շաբաթէն մենք յայտնուե-  
ցինք անոր դռան առջեւ: Ան մեր այցելութիւնը կը տեսնէր, որպէս այդ  
տարօրինակ աղօքքի պատասխան: Կարծ ժամանակ անց, ան եւ իր  
ամուսինը Տեր Յշտուին յանձնեցին իրենց սիրտը: Աստուած կրկին  
պահեց այդ խոստումը: Այս տիկինը անկեղծօրէն փնտռեց Աստուծոյ  
եւ Աստուած ամէն բան կազմակերպեց, որ ան գտնէ զինք: Նման պատ-  
մութիւններ կրնաք լսել ամբողջ աշխարհէն:

Չինացի փոքրիկ տղայ մը կ'ապրէր հիւսիսային Չինաստանի գիւերէն մէկուն մէջ, որտեղ ոչ ոք երբեւէ Աւետարանը հասցուցած չէր: Գիշերը իր մեծ մայրիկը զինք իր հետ կը տաներ մօտակայ սրբավայրը՝ կուռքին պաշտամունք մատուցանելու համար: Ան դուրս կը կանգնէր եւ կը նայէր տգեղ ու կեղսուտ կուռքին, որուն առջեւ իր մեծ մայրիկը ծունկի կուգար: Այնուհետեւ ան կը նայէր գիշերային երկինքի փայլուն աստղերուն: Ան կը զարմանար ու կը մտածէր, թէ ինչ կապ կայ այդ կուռքի եւ աստղերու միջեւ: Ան ինքնիրեն կը մտածէր ու կ'ըսէր, «Ես կ'ուզեմ ճանչնալ այն Աստուծոյ, ով ստեղծեց այս աստղերը»: Որոշ ժամանակ անց, չինացի քրիստոնեայ մը Աւետարանը բերաւ այդ գիւղ, եւ այդ տղան առաջիններէն մէկն էր ով լընդունեց Քրիստոսին, որպէս Փրկիչ: Յետոյ ան դարձաւ Չինաստանի հզօր աւետարանիշներէն մէկը: Աստուած կը պահէ Իր խոստումը. «Փնտռեցէք ու պիտի գտնէք»:

Եթէ արդեն կը ճանչնար Աստուծոյ, բայց կը զգաք, որ ձեր հոգեւոր կեանքին մէջ յառաջխաղացում չկայ, ուրեմն պէտք է Աստուծոյ աւելի բուռն փնտռեք: Խորիրդածէք այս հարցի շուրջ. «Ի՞նչ կ'ընեմ այն լոյսի (գիտութեան) հետ, որն արդեն ունիմ»: Մինչ կը կարդաք Աստուածաշունչը եւ կը տեսնէք, թէ Աստուած ինչպէս կ'աշխատի տղամարդկանց եւ կանանց կեանքին մէջ, կը սկսիք հասկնալ սուրբգրային հետեւեալ հիմնարար սկզբունքը. նախքան Աստուած ձեզ աւելի շատ լոյս տալը. Ան ձեզի հարց կուտայ. «Ի՞նչ կ'ընէք այն լոյսի հետ, որն արդեն ունիմ»:

Երբեւէ կերակրա՞ծ էք բարձր աթոռակի վրայ նստած փոքրիկ երեխայի: Երբ դգալով լեցուն կերակուրը կ'ուզէք դմել երեխայի բերանը, կարեւոր բան մը կայ որ պէտք է հիշէք: Սպասէք երեխան կլլէ բերանին մէջ եղածը, նախքան յաջորդ դգալը դնելը: Եթէ երկրորդ եւ երրորդ դգալը դնէք, դուք իսկապէս բաւականին խառնաշփորձիւն ստեղծած կ'ոլլաք: Աստուած մեզ կը կերակրէ դգալ առ դգալ: Բայց կարեւորն այն է, որ դուք հասկնաք, թէ Աստուած երկրորդ դգալը չի տար, մինչեւ դուք առաջին դգալի պարունակութիւնը կերած չ'ոլլաք:

Ընդունուած լոյսը աւելի շատ լոյս կը բերէ: Մերժուած լոյսը աւելի խաւար կը բերէ: Աստուած կը պահէ Իր խոստումը, եթէ Իրեն փնտռեք:

Ուես Տիրլավ

## «Այցելէ՛ք բազմաթիւ լաւ գրքեր, բայց ապրէ՛ք Աստուածաշունչին մէջ»


«Ան, ով երբեք չի կարդար, երբեք պիտի չկարդացուի. ան, ով երբեք չի մէջրերէր, երբեք պիտի չմէջրերուի»: Սա, ինչպէս նաևս այս յօդուածի վերնագիրը մէջրերուած են անձի մը գրուածքներէն, ով կոչուած է «քարոզիչներու իշխան»։ Խօսքը Չարլզ Հատոն Սփրըճնի մասին է։ Ան կը սիրեր գրքեր կարդալ։ Իր անձնական գրադարանը 12,000 գիրք կը կազմէր։ Այս փաստը, որ մէջրերեցի անոր խօսքերէն, իր յայտարարութեան ճշմարտացիութեան վառ ապացոյցն է։

Կ'ըսուի թէ կին մը դարձի եկած էր, երբ կարդացած էր Սփրըճնի քարոզներէն թերթ մը, որով փաթաթուած էր նպարավաճառէն առած կարագը։

Չնայած գրեթէ ամէն ինչ քուայնացուած է, եւ քջային հեռախօսներն ու համակարգիչները փոխարինած են մարդկային հաղորդակցութեանը, եւ մարդիկ կը նախընտրեն իրենց ժամանցը անցնել ամէն բանի վրայ, բացի ընթերցանութեան, հարց կ'առաջանայ մտքին մէջ, թէ արդեօք կարժէ՞ գրականութիւն հրատարակելը, յատկապէս քրիստոնէական գրականութիւնը։

Պատասխանը ԱՅՈ է։ Եւ որքա՞ն շնորհակալ ենք Աստուծոյ, որ Իր նախախնամութեամբ հոգեւոր սովի 70 տարիներէ ետք Հայաստան քրիստոնէական գրականութիւն կը մտնէ։ ԱՍՍ-ն նոյնպէս իր համեստ լումայով կը մասնակցի Հայաստանի ժողովուրդին հոգեւոր առողջ գրականութեամբ ապահովելը։ Իրականութեան մէջ այս երկամսեայ թերթը, որ կը կարդար այն թանկարժէք սերմերէն մէկն է, որ իր մուտքն ունեցաւ Հայաստան 1995 թուականէն սկսեալ։

Բայց ես կ'ուզեմ յատուկ առանձնացնել Նոր Կտակարանի մեկնողական գրականութիւնը, որ Տոն Սրորմը եղայրը գրեթէ 7 տարի կը գրէ ու կը հրատարակէ Հայաստանի համար։ Ան արդեն 8 գրքերով հրատարակած է Նոր Կտակարանի 13 նամակ։ Տիրոջ օգնութեամբ այս տարուայ առաջին կիսամեակին տպագրեցինք Կորմաքացիներուն ուղղուած 1-ին եւ 2-րդ նամակներու մեկնութիւնը։ Հռովմայեցիս եւ Գա-



ղատացիս նամակներու մեկնութիւնը Տիրոց շնորհրով մինչեւ տարեկերջ պատրաստ կ'ըլլան մեր ընթերցողներուն համար:

Տոն եղբայրը ոչ միայն գրքեր կը գրէ, այլեւ գրեթէ ամէն տարի Հայաստան կ'այցելէ եւ Աւտարանը կը քարոզէ: Հովհիներ, ծառայողներ եւ շարքային քրիստոնեաներ շատ կը քաջալերուին այս պատգամներով եւ Աստուծոյ Խօսքը անձամք ուսումնասիրելու փափարով կը վերադառնան իրենց տուները:

Մեկնողական գրականութիւնը այն գործիքներէն մէկն է. որոնք քրիստոնեաներուն կը զիմէ ապրելու իրենց քրիստոնէական կեանքը եւ ճշմարտութեան Խօսքը ճիշտ բացատրելու (Բ Տիմ. 2:15):